ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Իրավունքի և
քաղաքականության
Ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քայաշյան

"12" հոկտեմբերի 2022 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի և քաղաքականության
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի

*Հեղինակ՝ Զոհրաբյան Ն. Յու.*

*ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ*

Դասընթաց՝ Քրեական դատավարության գիտության արդի հիմնախնդիրները

**Մագիստրոսական ծրագիր՝ 042802.03.7 Կրիմինալիստիկա**

**Դասիչ մասնագիտություն՝ 042802.00.7 Իրավական ուսումնասիրություններ**

ԵՐԵՎԱՆ

**1. Ներածություն.**

Վերջին տարիների ընթացքում քրեական դատավարության գործող օրենսգրքում իրականացված փոփոխությունները մի կողմից ունեցան դրական ազդեցություն մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում, իսկ մյուս կողմից հանգեցրեցին դատավարական ինստիտուտների և առանձին դրույթների ներքին հակասության: Նման իրավիճակ առկա է նաև արտասահմանյան երկրների քրեադատավարական օրենսդրություններում, ինչը պայմանավորված է նրանով, որ շատ հաճախ օրենսդիրը հաշվի չի առնում իրավաբան գիտնականների կարծիքները:

ՀՀ-ում իրականացվող իրավական բարեփոխումներից բացի, քրեադատավարական իրավահարաբերությունների դինամիկ զարգացման վրա զգալի ազդեցություն են ունեցել Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները, որոնք առանձնակի կարևորությամբ իմաստավորել և ապահովել են միատեսակ կիրառություն իրավակիրառ պրակտիկայում:

Քրեական դատավարության նոր օրենսգիրքը բավականին առաջադիմական է, դրանում ներառված են մի շարք նոր քրեադատավարական ինստիտուտներ, քրեադատավարական իրավահարաբերությունների կարգավորման նոր մեխանզիմներ, որոնք սկզբնական շրջանում կարող են դժվարություններ ստեղծել իրավակիրառողների համար: Տվյալ պարագայում, քրեական դատավարության գիտության դերն էլ ավելի է ընդգծվում և կարևորվում, քանի որ անհրաժեշտ է տալ գիտական հիմնավորումներ և բացատրություններ մի շարք քրեադատավարական կարգավորման նոր մեխանիզմների վերաբերյալ:

Մասնավորապես Նախագծով նախատեսվել է.

- վերացնել քրեական գործի հարուցման (նյութերի նախապատրաստման) փուլը. այն ներառել նախաքննության՝ որպես մինչդատական վարույթի իրականացման միակ եղանակի բովանդակության մեջ,
- փոխել «հետաքննություն» և «նախաքննություն» հասկացությունների քրեադատավարական հարաբերակցությունը, օպերատիվ-հետախուզական

գործունեությունն ինկորպորացնել քրեական դատավարության օրենսգիրք՝ այն նույնացնելով հետաքննության հետ,

- պաշտպանության կողմին վերապահել ապացույցներ ներկայացնելու իրավունք՝ մինչդատական վարույթում փաստաթղթեր և առարկաներ, իսկ դատարանում հետազոտման ենթակա ապացույցների ցանկ ներկայացնելու ձևով,
- հստակեցնել հարկադրանքի միջոցների, ներառյալ՝ ձերբակալման և կալանքի կիրառման նպատակը, հիմքերը և ընթացակարգերը, ընդլայնել և օպտիմալացնել խափանման միջոցների շրջանակը,
- դատական վերահսկողությունը տարածել բնակարանում կատարվող բոլոր քննչական գործողությունների, ինչպես նաև գույքի արգելադրման վրա, հստակեցնել մինչդատական վարույթում դատական պաշտպանության սահմանները,
- դատավարական հիմնական ժամկետների հաշվարկի և խափանման միջոցների կիրառման համար որպես նախապայման սահմանել հսկող դատախազի կողմից անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը,
- սահմանել ռեաբիլիտացիայի ինստիտուտ, նախատեսել տվյալ քրեական վարույթի շրջանակներում արդարացվածի կրած վնասների հատուցման հնարավորություն,
- վերացնել դատական ակտերի կատարումը՝ որպես քրեական վարույթի փուլ:

Նմանատիպ հարցերի քննարկմանն է կոչված սույն դասընթացը, որի յուրացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել դասընթացին վերաբերող պարտադիր և լրացուցիչ գրականությունը:

**2. Դասընթացի նպատակը և խնդիրը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնարար մակարդակով ծանոթացնել քրեական դատավարության գիտության արդի հիմնախնդիրների հետ, ինչպես նաև նպաստել ուսանողների մոտ առանձին քրեադատավարական ինստիտուտների վերաբերյալ խորացված գիտելիքներ ունենալուն:

Կրթական դասընթացի հիմնական խնդիրն է ուսանողներին ծանոթացնել քրեական դատավարության գիտության արդի հիմնախնդիրներին:

**2.1. Կրթական վերջնարդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները **պետք է.**

**Իմանան՝**

- ՀՀ Վճռաբեկ դատարանի և ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում տեղ գտած իրավական արժեքավոր դիրքորոշումները, ինչպես նաև քրեական դատավարության գիտության առջև ծառացած հիմնախնդիրները և դրանց լուծման հեռանկարները;

**Կարողանան՝**

- առաջ քաշել քրեադատավարական գիտության կոնկրետ հիմնահարցերի լուծմանն ուղղված առաջարկներ;

**Ունակ լինեն՝**

- գիտական ուսումնասիրություն իրականացնել քրեական դատավարության նոր օրենսգրքի և քրեական դատավարության գիտության մեջ առկա հակասությունների վերաբերյալ:

**2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)**

| Ուսումնական աշխատանքների տեսակները | Ամբողջը, ակ. ժամ. | Բաշխում ըստ կիսամյակների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 Կիս. | 2 Կիս. | 3 Կիս. | 4 կիս. | 5 Կիս. | 6 Կիս. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| **1.Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը** | **144** | **144** | | | | | |
| 1.1. Լսարանային պարապմունքներ: | **36** | **36** | | | | | |
| 1.1.1.Դասախոսություններ | **18** | **18** | | | | | |
| 1.1.2.Սեմինարներ | **18** | **18** | | | | | |
| 1.2. Ինքնուրույն աշխատանք | **108** | **108** | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք) | **Քննություն** | **Քննություն** | | | | | |

**2.3. Դասընթացի թեմատիկ պլան**

| **Դասընթացի բաժինները և թեմաները** | **Ընդհանուր (ակ. ժամ)** | **Դասախոսություններ (ակ. ժամ)** | **Սեմինար (ակ. ժամ)** | **Պարապմունքների այլ տեսակներ (ակ. ժամ)** |
|---|---|---|---|---|
| **Բաժին 1. Քրեական դատավարության գիտության ընդհանուր հիմնախնդիրները** | **50** | **6** | **6** | **38** |
| Թեմա 1.1. Քրեական վարույթի սկզբունքները | **16** | **2** | **2** | **12** |
| Թեմա 1.2. Ապացույցների հիմնական տեսությունները | **16** | **2** | **2** | **12** |
| Թեմա 1.3. Դատավարական հարկադրանքի միջոցները | **18** | **2** | **2** | **14** |
| **Բաժին 2. Քրեական դատավարության գիտության հատուկ հիմնախնդիրները** | **94** | **12** | **12** | **70** |
| Թեմա 2.1. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը | **18** | **2** | **2** | **14** |
| Թեմա 2.2. Գաղտնիության պահպանումը քրեական դատավարությունում | **18** | **2** | **2** | **14** |
| Թեմա 2.3. In Absentia դատավարության իրականացումը | **18** | **2** | **2** | **14** |
| Թեմա 2.4. Համագործակցության վարույթի հեռանկարները քրեական դատավարությունում | **18** | **2** | **2** | **14** |
| Թեմա 2.5. ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները քրեադատավարական գիտության զարգացման համատեքստում | **22** | **4** | **4** | **14** |
| **Ընդամենը** | **144** | **18** | **18** | **108** |

**3.Դասընթացի բաժինները և թեմաները**

**Բաժին 1. Քրեական դատավարության գիտության ընդհանուր հիմնախնդիրները:**

**Թեմա 1.1. Քրեական վարույթի սկզբունքները**

- Քրեական դատավարության սկզբունքների նորմատիվության սահմանները:
- Սկզբունքների նշանակությունը:

**Թեմա 1.2. Ապացույցների հիմնական տեսությունները**

- Ձևական ապացույցների տեսություն (théorie des preuves légales):
- Ապացույցների անգլոսաքսոնյան տեսություն:
- Ներքին համոզմունք (intime conviction):
- ՄԻԵԴ նախադեպային իրավունքում օգտագործվող տեսությունները:

**Թեմա 1.3. Դատավարական հարկադրանքի միջոցները**

- Դատավարական հարկադրանքի միջոցների ընդհանուր բնութագիրը:
- Խափանման միջոցների համակարգը քրեադատավարական փոփոխությունների լույսի ներքո:
- Գրավը որպես ինքնուրույն խափանման միջոց:
- Տնային կալանքի ներդրման հեռանկարները:

**Բաժին 2. Քրեական դատավարության գիտության հատուկ հիմնախնդիրները.**

**Թեմա 2.1. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը**

- Մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության հիմնախնդիրները:
- Մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության սահմանները:

**Թեմա 2.2. Գաղտնիության պահպանումը քրեական դատավարությունում**

- Օրենքով պահպանվող գաղտնիքների ստացման դատավարական կարգը:
- Օրենքով պահպանվող գաղտնիքների սահմանման անհրաժեշտությունը:
- Դռնփակ դատական նիստ անցկացնելու անհրաժեշտությունը և ՄԻԵԴ նախադեպային իրավունքը:

**Թեմա 2.3. In Absentia դատավարության իրականացումը**

- Հեռակա դատական քննության կիրառման հիմքերը:
- Հեռակա դատական քննություն կիրառելու մասին միջնորդության ներկայացումը և լուծումը:
- Հեռակա դատական քննության արդյունքում կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկումը:

**Թեմա 2.4. Համագործակցության վարույթի հեռանկարները քրեական դատավարությունում**

- Համագործակցության վարույթի նպատակը և կիրառելու հիմքը:
- Համագործակցության միջնորդության լուծումը:
- Համագործակցության վարույթով իրականացվող նախաքննությունը:
- Համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու հիմքը և պայմանները:

**Թեմա 2.4. ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները քրեադատավարական գիտության զարգացման համատեքստում**

- Քրեադատավարական և կոնվենցիոն իմաստով փաստը և ապացույցը (la notion des preuves):
- Զենքերի հավասարության սկզբունքը (the principle of equality of arms):
- Անձանց մասնավոր կյանքին միջամտելու չափանիշները:

**4. Տեսական բլոկ**

**Գրականության ցանկ (պարտադիր և լրացուցիչ)**

**Պարտադիր գրականություն**

1. Evidence and proofs from the perspective of the European Court of Human Rights https://www.ejtn.eu/Documents/Themis/Written%20paper%20Italie/Themis%20written%20paper%20Romania%202.pdf:

2. The case law of the European court of human rights on evidentiary standards in criminal proceedings https://rm.coe.int/council-of-europe-georgia-european-court-of-human-rights-case-study-ev/16807823c3:
3. ՀՀ քրեական դատավարություն. Մաս 1/ Գիտական խմբագիր Ա. Ղամբարյան, Երևան, 2016:
4. Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головко. - 2-е изд., испр. - М.: Статут, 2017.
5. http://www.consultant.ru/edu/student/download_books/book/golovko_kurs_ugolovnogo_processa/

**Լրացուցիչ գրականություն**

**Իրավական փաստաթղթեր**

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիա, 1950թ.-ի նոյեմբերի 4
2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ.-ի դեկտեմբերի 10
3. ՀՀ քրեական օրենսգիրք
4. ՀՀ օրենքը «Զենքի մասին», ընդունված է Ազգային Ժողովի կողմից 3 հուլիսի 1998 թ.
5. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից *1 հուլիսի 1998 թ.*
6. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 30.06.2021 *թ.*

**Գրականություն (ձեռնարկներ և ընթերցանության նյութեր)**

1. Արդարադատության մատչելիության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական վերլուծություն)/ Խմբագիր Դ. Ավետիսյան, Վ. Ենգիբարյան. Երևան, 2013:
2. Թումասյան Դ., Յորդաշ Ռ. Խոցելի տուժողների/ վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը: Երևան, 2017:
3. ՀՀ քրեական դատավարություն. Մաս 1/ Գիտական խմբագիր Ա. Ղամբարյան, Երևան, 2016:
4. Вышинский А.Я. Теория судебных доказательств в советском праве. М., 1941.
5. Барыгина А. А. Доказывание в уголовном процессе. Оценка отдельных видов доказательств. Учебное пособие для вузов. — М.: Юрайт, 2019. 277 с.

6. Безлепкин Б. Т. Уголовный процесс в вопросах и ответах. Учебное пособие. — М.: Проспект, 2020. 304 с.
7. Безлепкин Б.Т. Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации (постатейный). 14-е изд., перераб. и доп. М.: Проспект, 2017. 608 с.
8. Безлепкин Б.Т. Уголовный процесс в вопросах и ответах: учебное пособие. 9-е изд., перераб. и доп. М.: Проспект, 2018. 304 с.
9. Божьев В. П.,Гаврилов Б. Я. Уголовный процесс. Учебник для академического бакалавриата. — М.: Юрайт, 2019. 490 с.
10. Головко Л. В. Курс уголовного процесса. — М.: Статут, 2017. 1280 с.
11. Гриненко А. В. Уголовный процесс. Учебник и практикум. — М.: Юрайт, 2020. 308 с.
12. Зуев Ю.Г. Уголовное судопроизводство с участием присяжных заседателей: курс лекций. Москва: Проспект, 2018. 168 с.
13. Манова Н. С.,Францифоров Ю. В. Уголовный процесс. Учебное пособие. — М.: Юрайт, 2020. 244 с.
14. Основы уголовного судопроизводства: учебник для бакалавров / М.В. Бубчикова, В.А. Давыдов, В.В. Ершов и др.; под ред. В.А. Давыдова, В.В. Ершова. М.: РГУП, 2017. 444 с.
15. Скурко Е. В. Состязательный процесс. — М.: Юридический Центр, 2018. 66 с.
16. Тарасов А. А. Эксперт и специалист в уголовном процессе России. — М.: Проспект, 2019. 128 с.
17. Уголовный процесс. Учебник. / под ред. Булатов Б. Б., Баранов А. М. — М.: Юрайт, 2020. 568 с.
18. Уголовный процесс. Учебник. В 2 частях. Часть 2. / под ред. Булатов Б. Б., Баранов А. М. — М.: Юрайт, 2017. 352 с.
19. Угольникова Н. В. Уголовный процесс. Учебное пособие. — М.: Инфра-М, РИОР, 2016. 182 с.
20. Устинова А.В. Уголовный процесс в вопросах и ответах. Учебное пособие. — М.: Проспект, 2020. 128 с.
21. Францифоров Ю. В. Манова Н. С., Уголовный процесс. Учебник и практикум. — М.: Юрайт, 2020. 422 с.

22. Шаталов А.С., Крымов А.А. Уголовный процесс. Практикум. — М.: Проспект, 2020. 320 с.

**Ինտերնետ աղբյուրներ**

1. www.echr.coe.int
2. www.coe.am
3. http://www.state.gov/documents/organization/236708.pdf
4. http://www.osce.org/yerevan/84022
5. https://www.arlis.am/
6. http://www.irtek.am
7. https://www.theadvocatesgateway.org/toolkits

**ՄԻԵԴ-ի դատական պրակտիկա**

1. Ա-ն (A-ն) ընդդեմ Խորվաթիայի (դատավճիռը 14 հոկտեմբեր 2010թ.)
2. Աբդեննասեր Նաիտ-Լիմանն (Nait-Limann)ընդդեմ
3. Շվեյցարիայի (դատավճիռը 15 մարտի 2018թ.)
4. Ակելիենեն (Akelene) ընդդեմ Լիտվայի (դատավճիռը 16 հոկտեմբեր 2018թ.)
5. Այդինն (Aydin-ն) ընդդեմ Թուրքիայի (դատավճիռը 25 սեպտեմբեր 1997թ.)
6. Բավթարն (Baytar-ն) ընդդեմ Թուրքիայի (դատավճիռը 14 հոկտեմբեր 2014)
7. Բիքասն (Bikas) ընդդեմ Գերմանիայի (դատավճիռը 25 հունվար 2018թ.)
8. Բլոխինն (Blokhin-ն) ընդդեմ Ռուսաստանի (դատավճիռը 14 նոյեմբեր 2013թ.)
9. ԳՌՀ Ստիֆթանգ Գեգենն (Stiftan Gegen) ընդդեմ Շվեյցարիայի (դատավճիռը 9 հունվար 2018թ.)
10. Դորդևիցն (Dordevic) ընդդեմ Խորվաթիայի (դատավճիռ 24 հուլիս 2012թ.)
11. Դուրսոնն (Doorson-ն) ընդդեմ Նիդեռլանդների (դատավճիռը 25 մարտ 1996թ.)
12. Զոնթուլն (Zontul-ն) ընդդեմ Հունաստանի (դատավճիռը 17 հունվար 2012թ.)
13. Իքս-ն (X-ն) ընդդեմ Թուրքիայի (դատավճիռը 9 հոկտեմբեր 2012թ.)
14. Լակատոսովան և Լակատոսն (Lakatosova and Lakatos) ընդդեմ Սլովակիայի (դատավճիռը 11 դեկտեմբեր 2018թ.)
15. Լ.Կ.Բ.-ն (L.C.B-ն) ընդդեմ Միացյալ Թագավորության (դատավճիռը 9 հունիս 1998թ.)

16. Լոզովն (Lozov) ընդդեմ Ռուսաստանի (դատավճիռը 24 ապրիլ
17. 2018թ.)
18. Կաբողլուն և Օրանն (Kaboghlu and Oran) ընդդեմ Թուրքիայի (դատավճիռը 30 հոկտեմբեր 2018թ.)
19. Կյուտինն (Kiyutin-ն) ընդդեմ Ռուսաստանի (դատավճիռը 10 մարտ 2011թ.)
20. Հալիլովիցն (Halilovic-ն) ընդդեմ Բոսնիա-Հերցոգովինայի (դատավճիռը 24 նոյեմբեր 2009թ.)
21. Հովհաննիսյանն (Hovhannisyan) ընդդեմ Հայաստանի (դատավճիռը 19 հուլիս 2018թ.)
22. Մ.Կ.-ն (M.C.-ն) ընդդեմ Բուլղարիայի (դատավճիռը' 4 դեկտեմբեր 2003թ.)
23. Մենեշևան (Menesheva-ն) ընդդեմ Ռուսաստանի (դատավճիռը 9 մարտ 2006թ.)
24. Մունյազն (Munjaz-ն) ընդդեմ Միացյալ Թագավորության (դատավճիռը 17 հուլիս 2012թ.)
25. Պ.-ն և Ս.-ն (P and S) ընդդեմ Լեհաստանի (դատավճիռ 30 հունվար 2012թ.)
26. Պլոնկան (Plonka-ն) ընդդեմ Լեհաստանի (դատավճիռը 31 մարտ 2009թ.)
27. Ռենոլդն (Renolde-ն) ընդդեմ Ֆրանսիայի (դատավճիռը 16 հոկտեմբեր 2008թ.)
28. Ռուպան (Rupa-ն) ընդդեմ Ռումինիայի (դատավճիռը 16 դեկտեմբեր 2008թ.)
29. Սաուդն (Saoud-ն) ընդդեմ Ֆրանսիայի (դատավճիռը 9 հոկտեմբեր 2007թ.)
30. Սելամին և ուրիշներն (Selamin and others) ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության (դատավճիռը 1 մարտ 2018թ.)
31. Վեներսկին (Wenerski-ն) ընդդեմ Լեհաստանի (դատավճիռը 20 հունվար 2009թ.)
32. Տ.Ն.-ն (S.N.-ն) ընդդեմ Շվեդիայի (դատավճիռը 2 հուլիս 2002թ.)
33. Տ.-ն (T.-ն) ընդդեմ Միացյալ Թագավորության (դատավճիռը 16 դեկտեմբեր 1999թ.)
34. Օփուզն (Opuz-ն) ընդդեմ Թուրքիայի (դատավճիռը 9 հունիս 2009թ.) և այլն:

**5. Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները:**

**Խմբային քննարկում.** Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված իրավական հարցերի և խնդիրների վերաբերյալ: Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր և տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, բարեկիրթ վերաբերմունք խմբի անդամների հետ:

**Ելույթներ ըստ թեմայի.** Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում: Գնահատման չափանիշները՝ պլանի առկայություն, օգտագործված գրականության ցանկ, հղումների ճշգրտությունը, պատճառաբանվածություն:

**Թեստավորում.** Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները:

**Վերջնական քննություն.** Նպատակը՝ ստուգել և գնահատել ուսանողների գիտելիքները:

**6. Պրակտիկ բլոկ**

**Սեմինար և պրակտիկ պարապմունքների պլան:**

**Պարապմունքի տեսակ – տրամաբանական հարցերի և խնդիրների լուծում:**

**Ստուգման ձևը:** բանավոր հարցում:

**Թեմա 1.1. Քրեական վարույթի սկզբունքները:**

**Հարցեր քննարկման համար:**

1. Հանրայնության սկզբունքը:
2. Սկզբունքների այլընտրանքությունը:

**Թեմա 1.2. Ապացույցների հիմնական տեսությունները**

**Հարցեր քննարկման համար:**

1. Ձևական ապացույցների տեսություն (théorie des preuves légales)
2. Ապացույցների անգլոսաքսոնյան տեսություն
3. Ներքին համոզմունք (intime conviction)
4. ՄԻԵԴ նախադեպային իրավունքում օգտագործվող տեսությունները:

**Թեմա 1.3. Դատավարական հարկադրանքի միջոցները**

1. Դատավարական հարկադրանքի միջոցների ընդհանուր բնութագիրը
2. Խափանման միջոցների համակարգը քրեադատավարական փոփոխությունների լույսի ներքո
3. Գրավը որպես ինքնուրույն խափանման միջոց
4. Տնային կալանքի ներդրման հեռանկարները:

**Թեմա 2.1. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը**

1. Մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության հիմնախնդիրները
2. Մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության սահմանները:

**Թեմա 2.2. Գաղտնիության պահպանումը քրեական դատավարությունում**

**Հարցեր քննարկման համար:**

1. Օրենքով պահպանվող գաղտնիքների ստացման դատավարական կարգը:
2. Օրենքով պահպանվող գաղտնիքների սահմանման անհրաժեշտությունը:
3. Դռնփակ դատական նիստ անցկացնելու անհրաժեշտությունը և ՄԻԵԴ նախադեպային իրավունքը:

**Թեմա 2.3. In Absentia դատավարության իրականացումը**

1. Հեռակա դատական քննության կիրառման հիմքերը
2. Հեռակա դատական քննություն կիրառելու մասին միջնորդության ներկայացումը և լուծումը
3. Հեռակա դատական քննության արդյունքում կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկումը:

**Թեմա 2.4. Համագործակցության վարույթի հեռանկարները քրեական դատավարությունում**

1.Համագործակցության վարույթի նպատակը և կիրառելու հիմքը

2.Համագործակցության միջնորդության լուծումը

3.Համագործակցության վարույթով իրականացվող նախաքննությունը

4.Համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու հիմքը և պայմանները:

**Թեմա 2.5. ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները քրեադատավարական գիտության զարգացման համատեքստում**

1. Քրեադատավարական և կոնվենցիոն իմաստով փաստը և ապացույցը (la notion des preuves):
2. Զենքերի հավասարության սկզբունքը (the principle of equality of arms):
3. Անձանց մասնավոր կյանքին միջամտելու չափանիշները:

**Մագիստրոսական թեզի թեմաների հնարավոր ցանկ:**

1. Հետաքննության մարմնի կողմից քրեական հետապնդում իրականացնելը:
2. Մեղադրյալի կամարտահայտումը քրեական դատավարության հասկացությունների և սկզբունքների համատեքստում:
3. Մինչդատական վարույթի գաղտնիության սահմանները:
4. Օպերատիվ հետախուզական գործունեության և քրեական դատավարության հարաբերակցությունը:

**7. Մեթոդական բլոկ**

**Ինքնուրույն աշխատանքի մեթոդական ապահովումը:**

Ուսուցման մեթոդները դրանք դասախոսի և ուսանողների համատեղ գործունեության միջոցներ են՝ ուղղված կրթական նպատակների ձեռքբերմանը:

Ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառում են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ:

Դասավանդման մեթոդներն այն մեթոդներն են, որոնց օգնությամբ հաղորդվում են գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ: Ուսումնառության մեթոդների օգնությամբ ուսումնառողները ձեռք են բերվում անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ:

Գնահատման մեթոդները միտված են արժանահավատ կերպով ուսանողների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման չափմանը:

Այս մեթոդները փոխկապված են և շատ դեպքերում դասավանդման մեթոդը կարող է հանդես գալ որպես ուսումնառության մեթոդ կամ նաև գնահատման մեթոդ:

**Դասավանդման և ուսումնառության մեթոդները պետք է.**

- լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից,
- կիրառվեն ուսանողների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակներում,
- լինեն բազմատեսակ,
- խրախուսեն ուսանողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ, ըստ անհրաժեշտության,
- համապատասխանեն ուսուցման նպատակներին,
- ավելի արդյունավետ բացահայտեն նյութի բովանդակությունը,
- ուսանողների և դասախոսների հաղորդակցման, փոխհարաբերությունների ոճերը լինեն արդյունավետ,
- համապատասխանեն նյութատեխնիկական բազայի հնարավորություններին, դասախոսների մասնագիտական կարողություններին և թեմային հատկացված ժամաքանակին:

Ժամանակակից դիդակտիկայում գոյություն ունեն մեթոդների տարբեր դասակարգումներ: Վերջին ժամանակներում դասավանդման կարևոր պահանջներից է ուսանողների ակտիվության ու մասնակցության ապահովումը ուսուցման գործընթացում: